

# ՅՈՒՍԱԽԱԲ ԲԱՅՑ ՈՉ ՅՈՒՍԱՀԱՏ



1987-1988 տարեշրջանը Երևանի ուսանողներուն համար եղաւ պատմական տարեշրջան մը, որ երբեք չէր նմաներ նախորդ տարիներուն:

Այնպիսի օրեր ստեղծուեցան, որ խակապէս անսովոր երեւոյթ էին Հայաստանի ժողովուրդին, նոյնպէս՝ սփիւռքահայ ուսանողներու համար, որ կը գտնուէինք մեր հայրենիքին մէջ ոչ իբրեւ այցելու, այլ իբրեւ հարազատ զուակը մեր հարազատ օճախին, ստանալու բարձրագոյն կրթութիւն:

Իբրեւ սփիւռքահայ ուսանողներ ամբողջ վեց ամսուան ընթացքին ապրեցանք մեր ժողովուրդին հետ, մասնակից ըլլալով պայքարին, բերելով մեր օժանդակելու պատրաստակամութիւնը անոր, որ տիպար քաղաքացիի վայել ընթացքով դուրս եկաւ իբրեւ մէկ սիրտ եւ մէկ հոյի, միասնակամ ուժերով, դարձած մէկ բռունցք, կազմակերպելով ցոյցեր եւ միթիւնկներ Երևանի դանազան վայրերուն մէջ:

Օրերան հանդիսացաւ համայն ժողովուրդին արդար պահանջատիրութեան կեդրոնը:

Ցոյցերուն եւ միթիւնկներուն յաջորդեց նստացոյցը, դիւշերելով Օրերայի բակը մինչեւ առաւօտ, երիտասարդ տղոց հացադուլը, մնալով միշտ եւ միշտ արթուն, կառչած մեր արդար պահանջին:

Ժողովուրդին այս բոլոր ջանքերուն արդիւնքը եղաւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի այն նիստը, որ պահանջէր Լեւոնային Ղարաբաղի վերամիացումը Հայաստանին, ինչ որ մեծ մասամբ բաւարարութիւն պատճառեց ժողովուրդին: Այդ օր, ցոյցերն ու միթիւնկները ժամանակաւոր ձեւով կանգ առին:



Տարեշրջանը հասաւ իր աւարտին. ըստ սովորականի՝ պէտք էր վերադառնալ ծննդավայր, արձակուրդի:

4 Յուլիս 1988ի երեկոյեան պիտի մեկնէի Մոսկուա, տղա՝ Պէյրուի: Կէսօրուան ժամուն շշուկներ արդէն տարածուեր էին օդակայանի փակման մասին:

Թռիչքի պահէն մի քանի ժամ առաջ կ'ուղղուիմ դէպի «Զուարթնոց» օդակայանը: Ճանապարհին երթեւեկը անրնական վիճակ մը կը պարզէր: Զղալի էր թէ շշուկները ճիշդ էին:

Անճնարին էր մուտքը դէպի հիմնական ճանապարհ, որ կը տանի դէպի օդակայան, որ փակ էր ոստիկանութեան կողմէ ժողովուրդի ներխուժման պատճառով:

Ժողովուրդին այս ներխուժումը ստացեր էր այնպիսի երեւոյթ եւ բորբոքումը հասած գազաթնակէտին, որ անզօլ դարձեր էին կազմկոմիտէին ջանքերը՝ հեռացնելու ժողովուրդը այդ տարածքէն:

Անձամբ այդ վայրկեանին ինքզինքս զգացի յանցաւորի մը պէս, ճամպրուկը ձեռքիս կը սպասէի թռիչքի վերսկսելուն, մինչ իմ ժողովուրդս հոն կը տազնապէր անանձնական, աղչայի՛ն տաղնապով:

Օդակայանի զբաւումը տեւեց երկու օր, եւ այդ ընթացքին սպասողական վիճակ կ'ապրէր ողջ ժողովուրդը, թէ ինչպիսի հետեւանքներ պիտի ունենար այդ արարքը:

Երկրորդ օրը, երեկոյեան, ամէն ինչ պարզուեցաւ, ժողովուրդը յուսախար էր, բայց ոչ յուսահատ...:

Յաջորդ օրն իսկ օդակայանը վերսկսաւ իր աշխատանքին: Դէպի հոն առաջնորդող մայրուղին դարձած էր զօրանոց տանող ճամբայ մը, իսկ օդակայանը՝ իսկական զօրանոց:

Դժուար էր ինձի համար բացակայիլ Երևանէն Ֆէկուզ երկու ամսուան համար. բոլորովին տարբեր էր այս անգամուան բաժանումը:

Երևանի ժողովուրդը ապրեցաւ զարթօնքի նոր շրջան մը, վերակառուցման եւ հրապարակայնութեան բերումով, ինչպէս նաեւ ողջ սփիւռքը:

Փետրուարեան խիզախութեամբ կատարուած ցոյցերը արձանագրեցին նոր էջ մը հայ ժողովուրդի պատմութեան մէջ:

Հաւատքը ժողովուրդին՝ եղաւ միշտ զօրաւոր՝ հանդէպ բոլոր վերին մարմիններուն, որոնք անյատկապէս պիտի լուծէին արդար պահանջը ԼՂԻՄի՝ անոր վերամիացումովը Մայր Հայաստանին: Եւ այս հաւատքով ալ ժողովուրդը ապրեցաւ, սակայն ՍՍՀՄի Գերագոյն Խորհուրդի Յուլիս 18ի դումարած նիստը անգամ մը եւս մեզի յիշեցուց հայու դառն ճակատագիրը:

Սակայն աննահանջ է հայրենի մեր ժողովուրդը, աւելին՝ զարարագցին՝ իր յամառ կամքով. նոյնպէս սփիւռքը՝ իր արդար պահանջատիրութեան ճամբուն վրայ:

ԼԵՆԱ ԿԵՕՒՅՃԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի  
բանասիրական բաժնի Բ. դասարանի ուսանողուհի